

Գորայք

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 127 կմ,
Հեռավորությունը Միսիան քաղաքից՝ 30 կմ,
Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2140 մ,
Կարգավիճակը՝ բարձր լեռնային:

Գյուղը հիշատակվում է Մեծ Հայքի Սյունիք աշխարհի Հաբանց գավառում: Ըստ եղած սկզբնաղբյուրների գյուղն ունեցել է մի քանի անվանումներ՝ Ակունք, Բագարչայ, Բագարքենտ, Վասակակերտ: Գորայքը հիշատակում է Ստեփանոս Օրբելյանը, ըստ որի գյուղը Տաթևի վանքին վճարում էր տարեկան 10 միավոր հարկ:

Ոմանք Գորայքը նույնացնում են Գորիս քաղաքի, ոմանք էլ՝ Գորիսի շրջանի Վերին Շեն /Եղիշե/ գյուղի հետ: Գյուղում բնակվել են նաև մալականներ, որոնք 1880-ական թվականներին հեռացել են Հյուսիսային Կովկաս:

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝

- անասնապահությունը,
- դաշտավարությունը:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 21685 հա, այդ թվում՝

- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 20715 հա, որից՝
- վարելահող՝ 1815 հա, խոտհարք՝ 848 հա, արոտ՝ 14851 հա, այլ հողատեսք՝ 3202 հա
- բնակավայրերի հողեր՝ 68 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 97 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 34 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 8 հա: